*Հավելված*
*ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2023թ. Հունվարի 24-ի թիվ 19-Ա որոշման*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ ....................................................................................................6

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ....................................8

III. ՀՀ ՊԵԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՄՈՒՏՔԵՐԻ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....................................................................................................13

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ .........13

V. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ......................14

1. 1023՝ ԾՐԱԳՐԻ 31001՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ /5129/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....................................................................................................15

2. 1023-11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, /4264/ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ........................17

3. 1023՝ ԾՐԱԳՐԻ 11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 4239՝«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....................................................................................................21

4. 1023՝ ԾՐԱԳՐԻ 11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 4232՝ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/8-1 և ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2-1 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ/....................................................................................................25

VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ....................................................................27

5. 1023՝ ԾՐԱԳՐԻ 31001՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ /5129/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....... 28

*6.* 1023-11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, /4264/ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....... 28

**VII. «ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»**....... 29

| | |
|---|---|
| Հաշվեքննության հիմքը | Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 200-Ա որոշում: |
| Հաշվեքննության օբյեկտը | ՀՀ պետական եկամուտների կոմիտե: |
| Հաշվեքննության առարկան | 2022 թվականի ինն ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| Հաշվեքննության առարկայի չափանիշները | 1. ՀՀ հարկային օրենսգիրք,<br>2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,<br>3. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,<br>4.«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք,<br>5.«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք,<br>6. «Գնումների մասին» ՀՀ օրենք,<br>7.«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,<br>8.«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,<br>9.ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,<br>10.Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր: |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2022 թվականի հունվարի 1–ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30–ը: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը | 2022 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 31-ը: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն |

ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, վերլուծական ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում**[1]

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

[1] Տվյալ հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձինք հաջորդիվ իրականացնելու են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննություն:

# I.ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի / այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ / 2022 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննություն:

ՀՀ ՊԵԿ-ի 2022 թվականի բյուջեի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 136,498,828.82 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 130,003,712.09 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 133,160,032.80 հազ.դրամ:

***Հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են.***

***1023-31001՝ «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման շրջանակում 5129՝ «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի մասով առկա է անհամապատասխանություն և խեղաթյուրում կապված տնտեսագիտական դասակարգման հոդվածի ընտրության հետ:*** ՀՀ ՊԵԿ-ի կողմից թվով 4 մաքսային կետերում բեռնատար տրանսպորտային միջոցներ և բեռնատար գնացքներ զննող ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման ծախսերը կատարվել են 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 4252 «Ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն: Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է հաշվետվության վերը նշած հոդվածների խեղաթյուրման, համապատասխանաբար ըստ հոդվածների՝ ***188,480.04 հազ. դրամ գումարի չափով:***

***1023-11001՝ «Հարկային և մաքսային ծրագրի» միջոցառման /4264/ «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսերի մասով առկա է անհամապատասխանություն և խեղաթյուրում*** կապված ավտոմեքենաների վառելիքի գծով ծախսերի ճանաչման և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված չափի արժանահավատության հետ: 2022 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում ավտոմեքենաների վառելիքի՝ 106,233.80 հազ. դրամի չափով փաստացի ծախսերը ճանաչվել և արտացոլվել են առանց դրանց արժանահավատությունն ապահովող

ավտոմեքենաների երթուղային թերթիկներում փաստացի կատարած վազքի և պատասխանատու անձի (անձանց) ստորագրությունների առկայության:

***1023-11001՝ «Հարկային և մաքսային ծրագրի» միջոցառման /4239/ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» և /4232/ «Համակարգչային ծառայություններ» փնփեսագիփական դասակարգման հոդվածներով առկա են անհամապափասխանություններ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների մասով կապված*** կանխավճարի ապահովման բանկային երաշխիքի ներկայացման հետ***:***

ՀՀ ՊԵԿ-ը չի ապահովել աշխատողների աշխատավարձերի, պարգևատրումների (2022 թ"-ի ինն ամիսների դրամարկղային ծախսը՝ 11,275,074.30 հազ. դրամ), «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի (2022 թ.-ի ինն ամիսների դրամարկղային ծախսը՝ 24,773,244.08 հազ. դրամ) և «Հաշվեքննության հիմնական արդյունքներ» բաժնում զետեղված այլ տեղեկատվության տրամադրումը:

Հաշվեքննությունների իրականացմանն անհրաժեշտ բավարար համապատասխան տեղեկատվության բացակայության կամ սահմանափակումների պարագայում առկա է ռիսկ, որ բոլոր էական առումներով, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» կամ «դ» ենթակետերով սահմանված նորմերի ուժով կարող են հանգեցնել Ազգային ժողովում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ոչ լիարժեք կամ կարծիքից հրաժարվելու եզրահանգումներին:

# II.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2022 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ ՊԵԿ-ի պետական բյուջեի ինն ամիսների կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Հաշվեքննություն իրականացնելու համար պահանջվող տեղեկատվությունը ամբողջությամբ չի տրամադրվել: Մասնավորապես չի ստացվել տեղեկատվություն ներքոնշյալ աղյուսակում նշված հաշիվների մասով:

Աղյուսակ 1

| Միջոցառման կոդ | Միջոցառում | Հոդված | Տարեկան ճշտված պլան | 2022 թ. ինն ամիսներ Փաստ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1023-11001 | Հարկային և մաքսային ծառայություններ | 4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 10,018,837.40 | 6,616,536.00 | 1. Նշված տնտեսագիտական դասակարգման հոդվածներով պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել: 2. Ինչպես նաև, չի տրամադրվել ՀՀ ՊԵԿ-ի աշխատակազմում ՀՀ կառավարության 11.08.2005թ. թիվ 1223-Ն որոշմամբ սահմանված առանձին կատեգորիաների աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված աշխատանք իրականացնող աշխատակիցների ցանկը, ըստ աշխատանքի տեսակի՝ ներառելով վճարված աշխատավարձերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հավելումները: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4112 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 5,589,359.90 | 3,842,126.00 | |
| | | 4113 Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում | 816,412.30 | 816,412.30 | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **16,424,609.60** | **11,275,074.30** | |

Հաշվեքննիչ պալատի կողմից պահանջված տեղեկատվություն չտրամադրելը հաշվեքննության օբյեկտի կողմից պարզաբանվել է 2022 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՀՊՄ /433/2022 և 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՀՊՄ 492/2022 գրություններով՝ համաձայն որի, պահանջվածը անձնական տվյալներ պարունակող տեղեկատվություն է, որը կարող է տրամադրվել միայն անձնական տվյալների սուբյեկտ հանդիսացող անձանց համաձայնության առկայության պարագայում:

Բացի այդ, ամբողջական չի տրամադրվել նաև 1205-12009՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման 4639՝ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի մասով /տարեկան ճշտված պլանը կազմել է 34,734,200.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 24,773,244.08 հազ. դրամ/ պահանջված տեղեկատվությունը, որը հնարավորություն չի ընձեռել հաշվեքննությունը լիարժեք իրականացնելու համար:

Ստորև ներկայացված աղյուսակում 2022 թվականի ինն ամիսների պետական բյուջեի մուտքերի (եկամուտների) ձևավորման վերաբերյալ՝ գործառույթների մասով հաշվեքննության օբյեկտից տեղեկատվությունը պահանջված ձևաչափով (ամբողջությամբ և լիարժեք) չի տրամադրվել: Այդ իսկ պատճառով հնարավորություն չի ընձեռվել գնահատել նշված գործառույթների համապատասխանությունը կիրառելի իրավական ակտերի պահանջների նկատմամբ:

*Աղյուսակ 2*

| Հ/Հ | Գործառնություն | Պահանջված տեղեկատվություն |
|---|---|---|
| 1 | Հաշվետու ժամանակաշրջանում վիճակախաղերի, շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղերի և խաղատների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման մեխանիզմների և ստացված արդյունքների վերաբերյալ, մասնավորապես՝ | ա) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» և «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքներով սահմանված գործունեությամբ զբաղվողների կողմից ներկայացված տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասով անկախ աուդիտորական եզրակացությունների քանակի և արձանագրված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն: |
| | | բ) Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի կազմակերպման գործունեությամբ զբաղվողների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման, մոնիթորինգի և վերլուծությունների արդյունքներով իրականացված վերահսկողական աշխատանքների միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն /քանակային և գումարային արտահայտությամբ/. |
| | | գ) Կազմակերպիչների կողմից ՀՀ իրավական ակտերով օրենսդրությամբ սահմանված կարգով ու չափով հերթական տարեկան պետական տուրքերի գծով ժամկետանց պարտավորրությունների և ժամկետանց հարկային պարտավորրությունների վերաբերյալ տեղեկատվություն /քանակային և գումարային արտահայտությամբ/. |
| | | դ) Իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված լիցենզիայի կասեցման կամ դադարեցման հիմքերի վերաբերյալ տեղեկատվություն/քանակային արտահայտությամբ/: |
| 2 | Հետբացթողումային հսկողության իրականացում | Ըստ ձևաչափի պահանջվել է ստուգումների քանակի, ստուգված գործարքների քանակի, իրական մաքսային արժեքի, տարբերության, հաշվեգրված մաքսային վճարի և հաշվետու ժամանակահատվածի դրությամբ փաստացի վերականգնման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ ամիսների: |

| | | |
|---|---|---|
| 3 | ՀՀ հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված չկատարված պարտավորությունների գանձման, ինչպես նաև պարտավորությունների ապահովման նպատակով արգելադրման աշխատանքների իրականացման, իրավական ակտերով սահմանված պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վերապահված գործերով հետաքննության ու նախաքննության իրականացման, հարկային և մաքսային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն: | Ձևաչափով պահանջվել է տեղեկատվություն ըստ իրականացված աշխատանքների տեսակների, աշխատանքները իրականացրած ստորաբաժանումների, դատարանի կողմից քննված գործերի, գանգատարկման հանձնաժողովի կողմից քննված գործերի, քննչական վարչություն ներկայացված գործերի և իրականացված աշխատանքների արդյունքում առաջադրված գումարների վերաբերյալ |

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացված են 1-ից մինչև 4-րդ կետերում:

Հաշվեքննությամբ հայտնաբերված խեղաթյուրումները ներկայացված է 5-րդ և 6-րդ կետերում:

# III. ՀՀ ՊԵԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՄՈՒՏՔԵՐԻ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*ՀՀ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող մուտքերի (եկամուտների) վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված Հավելված 1-ում:*

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում պետական բյուջեի մուտքերը (եկամուտները) կազմել են 1,405,766.30 մլն. դրամ:

Տնտեսվարողների կողմից հաշվետվությունները, ինչպես նաև մաքսային հայտարարագրերը ներկայացվում են էլեկտրոնային ավտոմատացված համակարգի միջոցով, որի հիման վրա իրականացվում են հաշվետվությունների ուսումնասիրման, ստուգման և վերլուծության գործընթացները: Էլեկտրոնային ավտոմատացված համակարգի միջոցով հավաքագրվող մուտքերի (եկամուտների) հսկողական մեխանիզմները նախագծված, ներդրված և գործում են: Այդ գործընթացներում էական ռիսկեր չեն հայտնաբերվել:

# IV.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2022 թվականի ինն ամիսների ծախսերի վերաբերյալ

Աղյուսակ 3, Հազ.դրամ

| Ծրագիր | | Տարեկան ճշտված պլան | Հաշվետու ժամանակահատվածի պլան | Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 175,130,529.62 | 140,022,468.50 | 136,498,828.82 | 130,003,712.09 | 133,160,032.80 |
| 1015 | 210,600.00 | 155,616.00 | 140,400.00 | 129,001.14 | 129,001.14 | 80,860.17 |
| 1023 | *33,985,729.62* | 23,546,202.50 | 23,135,778.82 | 18,172,367.55 | 21,325,448.90 | 13,972,453.44 |
| 1102 | 106,200,000.00 | 90,270,000.00 | 87,172,000.00 | 86,929,099.32 | 86,929,099.32 | 57,664,598.25 |
| 1205 | 34,734,200.00 | 26,050,650.00 | 26,050,650.00 | 24,773,244.08 | 24,773,244.08 | 15,550,376.45 |
| 8984 | - | - | - | - | 3,239.36 | 864.89 |

2022 թվականի ինն ամիսների մուտքերի (եկամուտների) վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ում:

# V.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 1. 1023՝ ԾՐԱԳՐԻ 31001՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ /5129/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Առկա է անհամապատասխանություն Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջներին:***

2022 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ ՊԵԿ-ի կողմից թվով 4 մաքսային կետերում բեռնատար տրանսպորտային միջոցներ զննող Rapiscan Eagle Gantry 6(4,5) Mev մակնիշի ռենտգենյան զննող սարքավորումների և բեռնատար գնացքներ զննող ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման ծախսերը կատարվել են 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 4252 «Ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն: Ընդ որում՝ Rapiscan Eagle Gantry 6(4,5) Mev մակնիշի ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության համար 2022 թվականի ինն ամիսների ընթացքում փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարվել է գումարով՝ 142,014.30 հազ.դրամ և բեռնատար գնացքներ զննող ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության համար՝ 46,465.74 հազ.դրամ: Համաձայն Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանի «Ընթացիկ ծախսեր» հավելված 16-ի՝ հիմնական միջոցների պահպանման և ընթացիկ վերանորոգման համար օգտագործվող ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման ծախսերը համարվում են ապրանքների և

ծառայությունների ձեռքբերման ծախսեր: Դրանք պարբերաբար իրականացվում են, որպեսզի կարողանան նախատեսված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում օգտագործել այդ ակտիվները և դրանք չեն փոխում հիմնական միջոցները, այլ պահպանում են դրանց աշխատունակությունը, կամ էլ շարքից դուրս գալու դեպքում վերադարձնում են դրանք աշխատունակ վիճակի:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

ա) Կոմիտեն հաշվեքննողի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով կատարված ծախսերի անհամապատասխանությունը Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջներին ընդունվել է ի գիտություն:

բ) Կոմիտեն չի ընդունում հաշվեքննողի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով 188,480.0 հազար դրամի չափով կատարված խեղաթյուրման փաստը, քանի որ ըստ էության տեղի է ունեցել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անհամապատասխանություն:

Ելնելով վերոգրյալից՝ հաշվեքննողին առաջարկում ենք Կոմիտեի 2022 թվականի պետա-կան բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ արձանագրության 4-րդ կետից հանել վերջին պարբերությունը, քանի որ վերջինս ըստ բացատրական բառարանի նշանակում է աղավաղում, աղճատում, կեղծում, խեղում, նենգում և նենգափոխում:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Հաշվեքննությամբ արձանագրված հաշվետվության խեղաթյուրման փաստը հաշվեքննության օբյեկտի կողմից չընդունելու հանգամանքը հիմնավորվում է «խեղաթյուրում» բառի բառարանային բացատրությամբ: Մինչդեռ արտաքին պետական հաշվեքննությանը վերաբերելի փաստաթղթերում «խեղաթյուրում» եզրույթն օգտագործվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և Աուդիտի բարձրագույն մարմինների համար կիրառելի միջազգային ստանդարտներով սահմանված իմաստով՝ «ֆինանսական հաշվետվությունում գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման ու դրանց համար ֆինանսական հաշվետվությունների պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջների միջև տարբերություն»: Հետևաբար, հաշվի առնելով, որ տվյալ դեպքում ֆինանսական գործարքի՝ օրենսդրության կիրառելի պահանջից տարբերվող դասակարգմամբ հաշվառված և հաշվետվության մեջ ներկայացված լինելու հանգամանքները հաշվեքննությամբ ապացուցված են, ուստի հաշվետվությունն ինքնաբերաբար խեղաթյուրված է:

## 2. 1023-11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, /4264/ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտադիր վավերապայմանների, ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ»-ով սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջների հետ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ-ի թիվ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի ձև Ծխ-6 և ՀՀ ֆինանսների նախարարի 09.03.2016թ-ի թիվ 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7-րդ կետի պահանջների հետ:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2022 թ.-ի ինն ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության 1023 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4264՝ «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 88,014.20 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 85,507.11 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 106,233.80 հազ.դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունը պայմանավորված է տարեսկզբին առկա վառելիքով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ ըստ կնքված պայմանագրերի՝ մատակարարների կողմից վառելիքը տրամադրվել է կտրոններով, իսկ տարեսկզբին առկա մնացորդները՝ արտացոլված են հաշվետվություններում:

30.09.2022թ.-ի դրությամբ ՀՀ ՊԵԿ-ի հաշվեկշռում հաշվառված է թվով 144 միավոր ավտոմեքենա, որից 13 միավոր՝ ըստ հաշվեքննությանը տրամադրված տեղեկատվության չի շահագործվում:

Ստորև աղյուսակում ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում բենզինի, դիզելային վառելիքի և անվադողերի շարժը.

*Աղյուսակ 4*

| Անվանում | Ընթացիկ գին դրամ | Սկզբնական մնացորդ | | Մուտք | | Ելք | | Վերջնական մնացորդ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ | գումար /հազ.դրամ/ | Քանակ | գումար /հազ.դրամ/ | Քանակ | գումար /հազ.դրամ/ | Քանակ | գումար /հազ.դրամ/ |
| Բենզին ռեգուլյար կտրոն /Աի-92-Կ5/ /լիտր/ | 420 | 0 | 0 | 250 250 | 105,105.00 | 120 050 | 50,421.00 | 130 200 | 54,684.00 |
| Բենզին ռեգուլյար կտրոն /Աի-92-Կ5/ /լիտր/ | 465 | 58 755 | 27,321.07 | 100 | 46.500.00 | 58 855 | 27,367.57 | 0 | 0 |
| Բենզին Աի-95-Կ5 պրեմիում կտրոն /լիտր/ | 440,00 | 0 | 0 | 10 000 | 4.400. 00 | 575 | 253.00 | 9 425 | 4,147.00 |
| Բենզին Աի-95-Կ5 պրեմիում կտրոն /լիտր/ | 480,00 | 7 710 | 3, 700. 80 | 0 | 0 | 7 710 | 3,700.80 | 0 | 0 |
| Դիզելային վառելիք ամառային կտրոն /լիտր/ | 382,20 | 8 935 | 3,414.95 | 100 | 38.220.00 | 9 035 | 3,453.17 | 0 | 0 |
| Դիզելային վառելիք ամառային կտրոն /լիտր/ | 421,40 | 0 | 0 | 45 000 | 18.963.00 | 34 280 | 14,445.59 | 10 720 | 4,517.40 |
| Դիզելային վառելիք ամառային կտրոն /գեներատոր/ /լիտր/ | 289,90 | 4 140 | 1,200.18 | 0 | 0 | 4 140 | 1,200.18 | 0 | 0 |
| Դիզելային վառելիք / ամառային կտրոն /գեներատոր/ լիտր | 400,00 | 19 045 | 7,618.00 | 0 | 0 | 6 630 | 2,652.00 | 12 415 | 4,966.00 |
| Անվադող /հատ/ | - | 296 | 8,129.00 | 286 | 10,699.99 | 232 | 7,184.48 | 350 | 11,644.52 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | | 98, 881 | 51,384.02 | 305,736 | 139,252.71 | 241,507 | 110,677.81 | 163,110 | 79,958.92 |

*Հավելված*

*ՀՀ հաշվեքննիչ պալատի*

*2022թ.-ի թիվ Ա որոշման*

Վերոնշյալ աղյուսակում վառելիքի և անվադողերի գծով հաշվետու ժամանակահատվածում ելքագրված 110,677.81 հազ. դրամից 106,233.80 հազ.դրամը հաշվապահորեն, որպես փաստացի ծախս ձևակերպվել է 4264՝ «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, իսկ 4,444.81 հազ.դրամը 4212՝ «էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

ՀՀ ՊԵԿ-ում բենզինի և դիզելային վառելիքի բաշխումը կատարվել է պատասխանատու անձանց միջոցով ՀՀ ՊԵԿ նախագահի 2018-թվականի օգոստոսի 02-ի N 485-Ա հրամանի հիման վրա, համաձայն որի յուրաքանչյուր ավտոմեքենայի շահագործման համար ամսական տրամադրվել է կտրոններ՝ սահմանված չափով:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՀՀ ՊԵԿ ավտոմեքենաների վառելիքի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերում՝ երթուղային թերթիկներում բացակայում են օրական կամ ամսական վազքի ցուցմունքները, ինչպես նաև պատասխանատու անձի՝ մեխանիկի ստորագրությունները: ***Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված պարտադիր վավերապայմանների հետ***:

Փաստորեն ավտոմեքենաների վառելիքի ծախսը ճանաչվել և հաշվետվություններում արտացոլվել է չպահպանելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ»-ով սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջները, համաձայն որի ֆինանսական հաշվետվությունում ծախսերը պետք է ճանաչվեն, երբ առաջացել է ապագա տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի նվազում՝ կապված ակտիվի նվազման կամ պարտավորության աճի հետ, որը կարող է արժանահավատորեն չափվել: Չափումը այն դրամային գումարի որոշման գործընթացն է, որով տվյալ դեպքում ծախսերը ճանաչվում և գրանցվում են ֆինանսական հաշվետվություններում:

***Առկա է անհամապատասխանություն*** ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ»-ով սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջների հետ, որն ինչպես

նշված է ընթացիկ եզրակացության VI բաժնի 6-րդ կետում հանգեցրել է ֆինանսական հաշվետվությունում արտացոլված ցուցանիշի խեղաթյուրման:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Կոմիտեի ծառայողական ավտոմեքենաների համար ուղեթերթիկը լրացվում է Կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ծառայողական ավտոմեքենաներին հատկացվող վառելիքի տրամադրման կարգը, սահմանաքանակները, ծախսի նորմաները, տրամադրվող լրացուցիչ վառելիքի զեկուցագրի ձևը, մարդատար (բեռնատար) ավտոմեքենայի ուղեթերթիկը, տրամադրված վառելիքի ծախսի հաշվետվությունը և լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիրը հաստատելու մասին» թիվ 485-Ա հրամանի Հավելված 5-ի համաձայն, իսկ ֆինանսահաշվային փաստաթղթերի հանձնումը և ընդունումը կատարվում է գրանցամատյաններում՝ լրացնելով անհրաժեշտ բոլոր տվյալները:

Ինչ վերաբերում է Կոմիտեի թվով 13 միավոր տրանսպորտային միջոցների չշահագործմանը հայտնում ենք հետևյալը.

Տրանսպորտային միջոցներից 4-ը հանդիսանում են ռենտգեն և լաբորատոր զննման հատուկ մեքենաներ (3 միավոր Վոլվո ռենտգեն զննող, 1 միավոր Ֆորդ-Տրանզիտ լաբորատոր), որոնց համար վառելիք հատկացվում է ըստ անհրաժեշտության, իսկ մնացած թվով 9 միավոր տրանսպորտային միջոցների շահագործման հետ կապված վառելիքի ծախսերը կատարվում են ներքին գործուղումների հրամանների հիման վրա՝ հիմք ընդունելով տրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալները և երթուղին:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ, ըստ էության, առարկություններ չեն ներկայացվել, քանի որ վառելիքի ծախսը հիմնավորվում է սկզբնական հաշվառման փաստաթղթում՝ տվյալ դեպքում երթուղային թերթիկներում գրառվող փաստացի կատարված վազքի (կմ) և պատասխանատու անձի ստորագրությամբ վավերացված տվյալների հիման վրա:

## 3. 1023՝ ԾՐԱԳՐԻ 11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 4239՝«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների հետ:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ 1023 ծրագրի 11001 հարկային և մաքսային ծառայություններ միջոցառման 4239 տնտեսագիտական դասակարգման հոդվածով 2022 թվականի ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 723,424.30 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 295,512.79 հազ.դրամ: Նշված հոդվածով կատարված ծախսի մեջ 60.5%-ը՝ 178,773.80 հազ.դրամ կազմել է ՀՀ ՊԵԿ շենքերի մաքրման ծառայությունների մատուցումը և 19.4%-ը՝ 57,282.24 հազ. դրամ կազմել է ՀՀ ՊԵԿ կարիքների համար ուղևորափոխադրումների մասնագիտացված ծառայությունների մատուցումը: Հաշվեքննություն է իրականացվել միայն մաքրման և ուղևորափոխադրումների մասնագիտացված ծառայությունների մասով:

2022 թվականի ինն ամիսների ընթացքում 4239 տնտեսագիտական դասակարգման հոդվածից ՀՀ ՊԵԿ-ի կողմից ՀՀ ՊԵԿ-ի շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16 կազմակերպությունների հետ կնքվել են 46 գնման պայմանագրեր՝ 1,152,240.64 հազ.դրամ գումարի չափով: Պայմանագրերից 43-ը կնքվել են գնանշման հարցման ընթացակարգերի արդյունքում, իսկ 3-ը՝ էլեկտրոնային աճուրդի:

Կնքված Պայմանագրերի 4.1.1 կետով ՀՀ ՊԵԿ-ը մաքրության ծառայություն մատուցողներին նախատեսել է վճարել կանխավճար 2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար: Պայմանագրերը կնքելուց 15 աշխատանքային օր առաջ ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ներկայացնեին կանխավճարի ապահովման բանկային երաշխիք, որը չի արվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին, այն է՝ «....**Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով**» և «...**Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր**» :

Այսպիսով, ՀՀ ՊԵԿ-ի և մաքրության ծառայություն մատուցող 16 կազմակերպությունների միջև կնքվել են 46 պայմանագրեր, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ վերջիններիս կողմից չի ներկայացվել կանխավճարի ապահովման բանկային երաշխիք:

### *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*

Եվս մեկ անգամ հայտնում ենք, որ մաքրման ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագրերի ընթացակարգերի հրավերներով հստակ սահմանվել է կանխավճարներ տրամադրելու պայմանները և կանխավճարներ տրամադրվելու է միայն դեկտեմբեր ամսվա համար՝ առավելագույնս կրճատելով 2023 թվականի բյուջեի ծանրաբեռնվածությունը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններով կանխավճար փոխանցելուց առաջ մասնակիցը ներկայացրել է կանխավճարի չափով ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով՝ որից հետո միայն փոխանցվել է գումարը: Քանի որ, **կանխավճարը նախատեսվել է դեկտեմբեր ամսվա համար** հետևաբար 28.02.2022 թվականի և 13.12.2021 թվականի (ֆինանսական միջոցների վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է 16.02.2022 թվականին) կնքված ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-2022/1 և ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/2 ծածկագրերով գնման պայմանագրերը կնքվել են առանց կանխավճարի ապահովման՝ զերծ պահելով մասնակցին լրացուցիչ ֆինանսական պարտավորությունների կրման բեռից: Եթե մասնակցից պահանջվեր փետրվար ամսին ներկայացնել կանխավճարի ապահովում՝ պայմանով, որ դեկտեմբերին կփոխանցվի գումարը, դա կհակասեր գնումների մասին ՀՀ օրենսդրության սկզբունքներին և նպատակներին: Մասնավորապես՝ նման պահանջը կհակասեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին՝ **Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք**, այն է՝

ա) **պատվիրատուին** վերապահված լիազորությունների կատարման համար **անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան** ապրանքների, աշխատանքների և **ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ**,

բ) **գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում**:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

ա) **գնման գործընթացի** միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, **համաչափ**, հրապարակային և ոչ խտրական **հիմունքներով կազմակերպում**,

բ) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում,

գ) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Միևնույն ժամանակ Օրենքի՝

35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը ներկայացնում է նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով,

36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում ... կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Մինչև հիշյալ ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, կանխավճարի չափի կամ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

32-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հրավերում նշվում է կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի մասին, պայմանով, որ ընտրված մասնակիցը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից:

56-րդ կետի համաձայն՝ արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Միաժամանակ նույն կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ արհեստական է համարվում պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն՝ բացառությամբ նույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների:

Հետևաբար, քանի որ հրավերով նախատեսվել է կանխավճարի տրամադրում, ապա պայմանագիրը կնքելուց հետո կանխավճարը կարող է տրամադրվել հետագայում, պայմանով, եթե վերջինս կներկայացնի կանխավճարի ապահովում:

Վերոգրյալի հետ կապված կից ներկայացվում է նաև լիազոր մարմնի կողմից տրված պարզաբանումը:

### *Հաշվեքննողների մեկնաբանությունը*

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունններն ու առարկությունները, մասնավորապես՝ «Եթե մասնակցից պահանջվեր փետրվար ամսին ներկայացնել կանխավճարի ապահովում՝ պայմանով, որ դեկտեմբերին կփոխանցվի գումարը, դա կհակասեր գնումների մասին ՀՀ օրենսդրության սկզբունքներին և նպատակներին:», ըստ էության կարծիք է այն մասին, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքում առկա է սահմանված կիրառելի պահանջի՝ 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Բացի այդ, ինչպես

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունների և առարկությունների մեջ հիշատակված ՝ «բ) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում», այնպես էլ՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով նշված սկզբունքի՝ «7. Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:» պահպանման տեսակետից հաշվեքննության օբյեկտի կոնկրետ գործարքը չի հիմնավորվում, պարզապես, հաշվի առնելով իրականացված հաշվեքննության տեսակը (ֆինանսական և համապատասխանության), հաշվեքննությունը չի անդրադարձել արդյունավետության սկզբունքների պահպանմանը: Այլապես, դժվար չէ հաշվել դեռևս չստացված ծառայության դիմաց վճարված գումարի (դեկտեմբերի կանխավճարին) զուտ ներկա արժեքը (այսուհետ՝ ԶՆԱ) և այն համադրել հունվարին նույն գումարի ԶՆԱ-ի հետ ու առնվազն «տնտեսող» սկզբունքի պահպանման վերաբերյալ դատողությունն ակնհայտ կդառնա:

## 4. 1023՝ ԾՐԱԳՐԻ 11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 4232՝ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/8-1 և ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2-1 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ/

***Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների հետ:***

*ՀՀ պետական բյուջեից ՀՀ ՊԵԿ-ի «Համակարգչային ծառայություններ» 4232 տնտեսագիտական դասակարգման հոդվածով 2022 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 856,427.70 հազ.դրամ, հաշվետու տարվա /01.01.22-30.09.22թթ/ ճշտված պլանը՝ 593,348.00 հազ.դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 477,774.15 հազ. դրամ:*

2022 թվականի ինն ամիսների ընթացքում 4232 տնտեսագիտական հոդվածից ՀՀ ՊԵԿ-ի կողմից պետության կարիքների համար կնքվել են ծառայությունների մատուցման գնման 14 պայմանագրեր: Տվյալ պայմանագրերից 8-ը՝ կնքվել են էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, այդ թվում 28.12.2021թ՝ ՀՀ ՊԵԿ –ԷԱՃԾՁԲ-21/8-1 և 07.03.2022թ ՀՀ

ՊԵԿ-ԷԱՃԶԲ-22/2-1 ընդհանուր 620,600.00 հազ.դրամի չափով: Վերոգրյալ Պայմանագրերի 4.1.1 կետով ՀՀ ՊԵԿ-ը ծառայություն մատուցող կազմակերպություններին նախատեսել է վճարել կանխավճար 2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար: Պայմանագրերը կնքելուց 15 աշխատանքային օր առաջ ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ներկայացնեին կանխավճարի ապահովման բանկային երաշխիք, որը չի արվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին, այն է՝ «….**Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով**» և «...**եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր**» :

Այսպիսով, ՀՀ ՊԵԿ-ի և ծառայություն մատուցող 2 կազմակերպությունների միջև կնքվել են պայմանագրեր, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ վերջիններիս կողմից չի ներկայացվել կանխավճարի ապահովման բանկային երաշխիք: Երկու պայմանագրերի մասով՝ համաձայն ներկայացված փաստաթղթերի ծառայությունները հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացվել է պայմանագրերի և տեխնիկական բնութագրերին համապատասխան:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/8-1 և ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2-1 ծածկագրերով գնման պայմանագրերով նախատեսված կանխավճարների վերաբերյալ Կոմիտեի դիրքորոշումը նույնն է ինչ նշված է Հաշվեքննության 6-րդ կետում:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Հաշվեքննողի մեկնաբանությունը նույնն է, ինչ ներկայացված է նախորդ կետի մեկնաբանությունում:

# VI.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 5. 1023՝ ԾՐԱԳՐԻ 31001՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ /5129/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Առկա է խեղաթյուրում 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսերի մասով՝ 188,480.04 հազ.դրամ գումարի չափով:***

***Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, հաշվեքննության օբյեկտի արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը ներկայացված է սույն եզրակացության 1-ին կետում:***

## 6. 1023-11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, /4264/ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Առկա է խեղաթյուրում 4264 «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսերի մասով՝ 106,233.80 հազ.դրամ գումարի չափով:***

***Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունը, հաշվեքննության օբյեկտի արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը ներկայացված է սույն եզրակացության 2-րդ կետում:***

# VII.«ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»

| № | Անհամապատասխանություն/ խեղաթյուրում[2] | Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է[3] | Ծանոթություններ[4] |
|---|---|---|---|
| 1023-31001՝ «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-2022/1 և ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/2 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
| 1 | Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների հետ՝ «….Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով» և «…Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու | Վերացված չէ | Հաշվեքննողի կողմից վերոգրյալ պայմանագրերի գծով ներկայացված մեկնաբանությունները Կոմիտեի կողմից ընդունելի չեն: Քանի որ կանխավճարը մասնակցին տրամադրվել է ոչ թե է անմիջապես պայմանագիրը կնքելուց հետո այլ տվյալ տարվա դեկտեմբեր ամսին, որի վերաբերյալ հղումը հստակ առկա է մրցույթի հրավերում: Ինչ վերաբերվում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից կանխավճարի վերաբերյալ ներկայացված պարզաբանմանը, որը Հաշվեքննողի կողմից դիտարկվել է որպես կարծիք, ընդունելի չէ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը (Նախարարությունը)՝ պատվիրատուներին |

---

[2] Ներկայացնել անհամապատասխանության/խեղաթյուրման հակիրճ էությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

[3] Ընտրել երեք տարբերակներից մեկը /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

[4] Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

| | | | |
|---|---|---|---|
| | դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր» : | | մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնում-ների գործի կազմակերպման հարցում:<br>Հետևաբար պայմանագրի կնքումը և կանխավճարի տրամադրումը կատարվել են ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան:<br><br>***<u>Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված դիրքորոշումը ընդունելի չէ հաշվեքննողների կողմից, քանի որ պայմանագրի կնքման գործընթացը, մասնավորապես կանխավճար նախատեսված լինելու դեպքում հստակ կարգավորված է ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ:</u>*** |
| 1023-31001՝ «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 5129՝ «ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
| 2 | Առկա է անհամապատախանություն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների մասով: | Վերացված չէ | Հաշվեքննողի կողմից վերոգրյալ հոդվածի շրջանակներում արձանագրվել է, որ տեղի է ունեցել 159,330.8 հազար դրամի խեղաթյուրում: Կոմիտեն վերոգրյալ ծախսերի իրականացումը որպես խեղաթյուրում չի դիտարկում, քանի որ, ըստ էության, տեղի է ունեցել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անհամապատասխանություն, որի հետ կապված իր դիրքորոշումն արդեն իսկ ներկայացրել էր |

| | | | |
|---|---|---|---|
| | Առկա է խեղաթյուրում 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսերի մասով՝ 159,330.83 հազ.դրամ գումարի չափով: | | «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արձանագրության» վերաբերյալ առարկություններում:<br>Ելնելով վերոգրյալից՝ Հաշվեքննողին առաջարկում ենք Կոմիտեի 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունից հանել խեղաթյուրումների վերաբերյալ 5-րդ գլխի 7-րդ կետը, քանի որ վերջինս ըստ բացատրական բառարանի նշանակում է աղավաղում, աղճատում, կեղծում, խեղում, նենգում և նենգափոխում:<br>***<u>Հաշվեքննությամբ արձանագրված հաշվետվության խեղաթյուրման փաստը հաշվեքննության օբյեկտի կողմից չընդունելու հանգամանքը հիմնավորվում է «խեղաթյուրում» բառի բառարանային բացատրությամբ: Մինչդեռ արտաքին պետական հաշվեքննությանը վերաբերելի փաստաթղթերում «խեղաթյուրում» եզրույթն օգտագործվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և Աուդիտի բարձրագույն մարմինների համար կիրառելի միջազգային ստանդարտներով սահմանված իմաստով՝ «ֆինանսական հաշվետվությունում գումարի, դասակարգման, ներկայացման կամ</u>*** |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ***բացահայտման ու դրանց համար ֆինանսական հաշվետվությունների պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջների միջև տարբերություն»: Հետևաբար, հաշվի առնելով, որ տվյալ դեպքում ֆինանսական գործարքի՝ օրենսդրության կիրառելի պահանջից տարբերվող դասակարգմամբ հաշվառված և հաշվետվության մեջ ներկայացված լինելու հանգամանքները հաշվեքննությամբ ապացուցված են, ապա հաշվետվությունն ինքնաբերաբար խեղաթյուրված է: Հաշվի առնելով վերոգրյալը, քանի դեռ արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները վերացված չեն հաշվեքննողը պարտավոր է արձանագրել փաստը:*** |
| 1023-31001՝ «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-2022/1 և ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/2 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ և ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
| 3 | Առկա է անհամապատասխանություն ՊԵԿ-ի և «Արեմպա Ինթերնեյշնալե ՍՊԸ ՖԶԸ-ի միջև 2022 թվականի փետրվարի 28-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-2022/1 պայմանագրի 1.1 կետով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է...... ծառայությունների մատուցման պարտավորությունը | Վերացված չէ | Հաշվեքննողի կողմից վերոգրյալ պայմանագրերի գծով ներկայացված մեկնաբանությունը Կոմիտեի կողմից ընդունելի չէ: Մասնավորապես, Հաշվեքննողի պնդումը թե մատուցված ծառայության ընթացքում չի իրականացվել տեխնիկական բնութագրով սահմանված ծառայության մատուցում՝ իրականությանը չի |

| | | | |
|---|---|---|---|
| | (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»: | | համապատասխանում: Ավելին, եթե Հաշվեքննողը ներկայացված փաստաթղթերի մեջ ակնհայտորեն չի տեսնում մատուցված ծառայությունների փաստացի կատարումը, ապա դա չի նշանակում որ վերջինիս կողմից ծառայություններ չեն մատուցվել: Ծառայությունների մատուցումը կարող է իրականացվել ինչպես անմիջական մասնակցությամբ այնպես էլ հեռավար տարբերակով, որի անհրաժեշտության մասին նշված է պայմանագրում: Կատարողը ծառայությունների մատուցման ընթացքում ներկայացնում է խնդիրները, կատարման ենթակա աշխատանքների ծավալը և դրանց պատճառահետևանքային կապերը, որից հետո նոր իրականացվում է ծառայությունների մատուցում:<br>Կատարողի կողմից մատուցված ծառայությունների գնահատականը ներկայացվում է երկու ԱԿՏ-երի միջոցով՝<br>ա) սարքավորման հետ անմիջական առնչություն ունեցող անձանց կողմից ստորագրված ակտի ձևով, որտեղ նշվում է Կատարողի կողմից իր պարտականությունները պատշաճ և ժամանակին կատարելու, ինչպես նաև թերի կատարելու կամ չկատարելու վերաբերյալ տեղեկատվությունը:<br>բ) Կատարողի և Կոմիտեի ներկայացուցիչների կողմից, երկկողմանի ստորագրությամբ, կազմվում է ԱԿՏ, որտեղ նշվում է կատարված աշխատանքների |
| 4 | Առկա է անհամապատասխանություն ՊԵԿ-ի և «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆԵ ՍՊԸ-իե ՍՊԸ-ի միջև 2021 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-2021/2 պայմանագրի 1.1 կետով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է...... ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների» : | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ծավալները, անհրաժեշտության դեպքում փոխարինված պահեստամասերը և այլն:<br>Հետևաբար վերոգրյալ ԱԿՏ-երը հանդիսանում են կատարված ծառայությունների վերաբերյալ հանձնման և ընդունման փաստաթղթեր, որոնց հիման վրա ստորագրվում է մատուցված ծառայությունների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրություն: Միաժամանակ, կից ներկայացնում ենք վերոգրյալ ԱԿՏ-երի օրինակները:<br>Անդրադառնալով Կատարողի կողմից մասնագետների պատրաստմանը հայտնում ենք, որ վերջինիս կողմից նման ծառայություն չի մատուցվում: Կոմիտեի աշխատակիցները անհրաժեշտ տեղեկատվությունը (գիտելիքները) ձեռք են բերում քննարկումների և խնդիրների համատեղ լուծման արդյունքում:<br>***<u>Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված առարկությունները ընդունելի չեն հաշվեքննողների կողմից: Համաձայն պայմանագրին կից տեխնիկական բնութագրին, Կատարողը մատուցում է ռենտգեն սարքավորման սպասարկման ծառայություն և ոչ թե մասնագետների պատրաստման ծառայություն, հետևաբար Կատարողի կողմից ծառայության մեկնաբանումը ենթադրում է մատուցված ծառայությունների վերաբերյալ</u>*** |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ***<u>մեկնաբանում ՊԵԿ-ին՝ որպես Պատվիրատու, որը հիմք կհանդիսանա վերջինիս կողմից ընդունման-հանձման արձանագրության հաստատման և վճարման կատարման: Որպես մեկնաբանման ապացույց հանդիսանում է գրավոր փաստաթուղթը:</u>*** |
| 1023՝ ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ 11001՝ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ, /4217/՝ «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
| 5 | Առկա է անհամապատասխանություն «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 321 հոդվածի 1-ին կետի՝ «Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին» և 5-րդ հոդվածի՝ «Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ» պահանջների մասով: | Վերացված չէ | Հաշվեքննողի կողմից վերոգրյալ պայմանագրերի գծով ներկայացված մեկնաբանություն-ները Կոմիտեի կողմից ընդունելի չեն: Մասնավորապես, «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի կողմից իր աշխատակցին տրամադրված լիազորագիրը մրցութային փաթեթի հետ միասին տրամադրվել է Հաշվեքննողին և ակնհայտ է, որ վերջինիս կողմից տեղի է ունեցել փաստաթղթերի ուսումնասիրման թերացում և բացթողում:<br>Անդրադառնալով ֆինանսական միջոցների տրամադրման համար կնքված համաձայնագրի գումարին՝ հայտնում ենք, որ այն սահմանված է առավելագույնը 365 օրվա համար և կապված չէ վճարումների հետ, քանի որ վճարումները իրականացվելու են փաստացի մատուցված |
| 6 | Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3 ծածկագրով գնման | | |

| | | | |
|---|---|---|---|
| | ընթացակարգի գնման հայտով սահմանված տեխնիկական բնութագրի, համաձայնագիր 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների մասով: | | ծառայությունների դիմաց: Համաձայնագրով սահմանված գումարի և վճարված գումարի տարբերությունը տարեվերջին փոխանցվելու է 2022 թվականի ՀՀ պետական բյուջե՝ որպես գնումների արդյունքում առաջացած խնայողություն՝ չառաջացնելով որևէ բացասական ֆինանսական հետևանք: <br>*Նյութերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:* <br>*ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում 16.11.2022թ. նախաձեռնվել է թիվ 59107922 քրեական վարույթը:* |
| 1023-11001՝ ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, /4264/ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
| 7 | Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների նախարարի 2016թ-ի փետրվարի 1-ի թիվ 37- Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի պահանջների նկատմամբ Հավելված 1-ի 48-րդ կետը, ինչպես նաև Հավելված 2-ով հաստատված գրանցամատյանների օրինակելի ձևերի պահանջների հետ: | Վերացված չէ | Հաշվեքննողի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Տրանսպորտային նյութեր» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունը Կոմիտեի կողմից ընդունելի չէ: Մասնավորապես, Կոմիտեի կողմից ներկայացված պարզաբանման մեջ ներկայացվել է առարկություն առ այն, որ Կոմիտեի ծառայողական ավտոմեքենաների համար ուղեթերթիկը լրացվում է Կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 2- |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ծառայողական ավտոմեքենաներին հատկացվող վառելիքի տրամադրման կարգը, սահմանաքանակները, ծախսի նորմաները, տրամադրվող լրացուցիչ վառելիքի զեկուցագրի ձևը, մարդատար (բեռնա-տար) ավտոմեքենայի ուղեթերթիկը, տրամադրված վառելիքի ծախսի հաշվետվությունը և լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիրը հաստատելու մասին» թիվ 485-Ա հրամանի Հավելված 5-ի համաձայն, իսկ ֆինանսահաշվային փաստաթղթերի հանձնումը և ընդունումը կատարվում է գրանցամատյաններում՝ լրացնելով անհրաժեշտ բոլոր տվյալները:<br><br>***<u>Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը հաշվեքննողի կողմից ընդունելի չէ, քանի որ վառլիքի ծախսը ճանաչվել և հաշվետվություններում արտացոլվել է չպահպանելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ»-ով սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջները, ինչպես նաև «Հանրային</u>*** |
| 8 | Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 09.03.2016թ.-ի թիվ 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7-րդ կետի պահանջների հետ: | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ***հարվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված պարտադիր վավերապայմանները՝ երթուղային թերթիկներում բացակայում են օրական կամ ամսական վազքի ցուցմունքները, ինչպես նաև՝ պատասխանատու անձի՝ մեխանիկի ստորագրությունները:*** |
| | | | |

Գեղամ Հովեյան
Հաշվեքննիչ պալատի անդամ
24 հունվար 2023 թվական
Հաշվեքննիչ պալատ, Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն